



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ  
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

18 Խոսչեբաբ 2018 թ. № 82 - Ա/1

ք. Երևան

ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ  
ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ  
ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻՆ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ազդարարման համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 15-ի № 272-Ն որոշումը՝ հրամայում եմ՝

1. Հաստատել ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման ձևը՝ համաձայն հավելվածի.

2. Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության և նախարարության համակարգի կազմակերպությունների ներքին և արտաքին ազդարարման պատասխանատու անձ նշանակել Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի ղեկավար Վահե Էլոյանին.

3. Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության և նախարարության համակարգի կազմակերպությունների ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման գրանցամատյանի վարող նշանակել Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետ Հասմիկ Վարդանյանին:



Լ. ՎԱՀՐԱԴՅԱՆ



ՁԵԿ

ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ  
ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ

1. Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) և Նախարարության համակարգի կազմակերպությունների ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և հաղորդումներին ընթացք տալու համար պատասխանատու անձանց նշանակում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարը՝ հաշվի առնելով Նախարարության կառուցվածքային առանձնահատկությունները:

2. Նախարարությունը հաղորդման հաշվառման և հաղորդումներին ընթացք տալու համար պատասխանատու անձանց տվյալները տեղադրում է իր կայքէջում:

3. Նախարարության և Նախարարության համակարգի կազմակերպությունների ներքին և արտաքին ազդարարման դեպքում «Ազդարարման համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված ժամկետներում հաղորդումները գրանցամատյանը վարողի կողմից հաշվառվում են գրանցամատյանում (ձև N° 1)՝ համապատասխան գրառման կատարմամբ: Գրանցամատյանում հաշվառվում են նաև այն հաղորդումները, որոնք ներկայացվել են ոչ իրավասու մարմին, և վերջինս օրենքով սահմանված կարգով այն վերահասցեագրել է իրավասու մարմին:

4. Գրանցամատյանում արձանագրվում են հետևյալ տեղեկությունները՝

- 1) հաղորդման հաշվառման հերթական համարը.
- 2) հաղորդման ներկայացման օրը, ամիսը, տարեթիվը.
- 3) հաղորդումը ներկայացրած անձի անունը, ազգանունը և հայրանունը.
- 4) հաղորդմամբ ներկայացված տեղեկության համառոտ բովանդակությունը.
- 5) հաղորդման առնչությամբ ձեռնարկված միջոցների ամբողջական նկարագիրը.
- 6) հաղորդման առնչությամբ ձեռնարկված միջոցների արդյունքը.
- 7) նշումներ ազդարարին ծանուցելու յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ.
- 8) ազդարարի ստորագրությունը.
- 9) գրանցամատյանը վարողի ստորագրությունը.
- 10) հաղորդման առնչությամբ այլ տեղեկություններ:


5. Գրանցամատյանի փաստաթղթային կամ էլեկտրոնային տարբերակը վարում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի հրամանով նշանակված պաշտոնատար անձը:



6. Գրանցամատյանը վարողը համարակալում, պատասխանատու անձը ստորագրում, իսկ փաստաթղթային տարբերակով վարման դեպքում՝ նաև կնքում է գրանցամատյանի բոլոր էջերը:

7. Հաղորդման հաշվառման նպատակով կազմվում և վարվում է գործ, որում պետք է պահվեն նաև գրանցամատյանում արձանագրված տեղեկություններին վերաբերող համապատասխան բոլոր նյութերի պատճենները:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Վ. ԷԼՈՅԱՆ


Գ Ր Ա Ն Ց Ա Մ Ա Տ Յ Ա Ն

ԱԶԴԱՐԱՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ

Հաղորդման հաշվառման հերթական համարը	Հաղորդման ներկայացման օրը, ամիսը, տարեթիվը	Հաղորդումը ներկայացրած անձի անունը, ազգանունը և հայրանունը	Հաղորդմամբ ներկայացված տեղեկության համառոտ բովանդակությունը	Հաղորդման առնչությամբ ձեռնարկված միջոցների ամբողջական նկարագիրը	Հաղորդման առնչությամբ ձեռնարկված միջոցների արդյունքը	Նշումներ ազդարարին ծանուցելու յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ	Ազդարարի ստորագրությունը	Գրանցամատյանը վարողի ստորագրությունը	Հաղորդման առնչությամբ այլ տեղեկություններ
1	2	3	4	5	6	7	8	9	10

Կ. Տ.

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱԿԱՐ՝



Վ. ԷԼՈՅԱՆ



## ՀՀ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Նախարարության և նախարարության համակարգի կազմակերպությունների ներքին և արտաքին ազդարարման համար պատասխանատու անձի և ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման գրանցամատյանի վարողի տվյալները

**Վահե Էլոյան՝** ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության և նախարարության համակարգի կազմակերպությունների ներքին և արտաքին ազդարարման համար պատասխանատու անձ, նախարարության աշխատակազմի ղեկավար (հեռ.՝ (011) 52-88-77, էլ. փոստ՝ [vahe.eloyan@msy.am](mailto:vahe.eloyan@msy.am))

**Հասմիկ Վարդանյան՝** ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության և նախարարության համակարգի կազմակերպությունների ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման գրանցամատյանի վարող, նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետ (հեռ.՝ (011) 52-85-95, էլ. փոստ՝ [hasmik.vardanyan@msy.am](mailto:hasmik.vardanyan@msy.am))